ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 մայիսի 2025 թվականի թիվ 96 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐԻ ՀԱՅՏԵՐԻ ՓԱԹԵԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԵՎ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից համայնքներին սուբվենցիաների տրամադրման կարգը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշումը.

Որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի համայնքների կողմից տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների հայտերի փաթեթների ուսումնասիրման և ծրագրերի իրականացման ընթացքի մշտադիտարկման նպատակով ստեղծել ոլորտային աշխատանքային խումբ համաձայն հավելվածի:

   - Աշխատանքային խմբին.

2. Սուբվենցիաների հայտերի փաթեթները ստանալուց հետո ուսումնասիրել ծրագրերի իրականացման իրագործելիության և ֆինանսական ցուցանիշների համապատասխանությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգի դրույթներին:
3. Սուբվենցիաների հայտերը քննարկելուց և ամփոփելուց հետո փաթեթները ներկայացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:
4. Կատարվող աշխատանքների ընթացքի և որակի համապատասխանության ուսումնասիրման նպատակով իրականացնել այցելություններ ամիսը 2 անգամ:

5. Կատարված աշխատանքների մասին մինչև յուրաքանչյուր ամսվա 10-ը տեղեկատվություն ներկայացնել մարզպետին:
6. Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված կարգին համապատասխան ապահովել ծրագրերի լուսաբանման գործընթացը:

ՀԱՅԿ ՂԱԼՈՒՄՅԱՆ

2025-05-12 12:23:25 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

մայիսի 2025թ.
ք. Իջևան

Հավելված՝

ՀՀ Տավուշի մարզպետի 12 մայիսի թիվ 96-Ա որոշման

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄ

Գ. Հարությունյան-զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ /խմբի ղեկավար/

Մ. Մելքումյան - քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ

Ա. Գալստյան - ՏԿ և ՏԻ հարցերի վարչության պետ

Ա. Բաբլումյան - ֆինանսական վարչության պետ

Վ. Փիրումյան - ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական

Ս. Խալաթյան - ՀՀ Տավուշի մարզպետի խորհրդական

Ա. Սարգսյան - քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Վ. Ղալումյան - քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության գլխավոր մասնագետ

Վ. Օրդյան - անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ

Իջևան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Դիլիջան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Բերդ համայնքի ղեկավար /համաձայնությամբ/

Նոյեմբերյան համայնքի ղեկավար /համաձայնությամբ/:

ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի

գլխավոր քարտուղար Ա.Գևորգյան

12.05.2025

X

ԱՐՄԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Signed by: GEVORGYAN ARMAN 2412760241